«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ - ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋԻ
ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԻ
2019-2020 ՈՒՍՏԱՐՎԱ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019-2020 ուսումնական տարում աշխատողների թիվը կազմել է 27 մարդ:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի թիվը՝ 20 (որից 17-ը կին):

Գիտությունների թեկնածու- 1

4 դասախոս համատեղության կարգով զբաղեցնում են վարչական պաշտոններ:

Վարչական անձնակազմը - 4

Ուսումնաօժանդակ կազմը - 4

2019-2020 ուստարվա ընթացքում կնքվել է 9 աշխատանքային պայմանագիր:

Բոլոր աշխատողները աշխատանքի ընդունվել են պայմանագրային կարգով՝ որոշակի ժամկետով:

Անձնական դիմումի համաձայն ազատվել են 6-ը հիմնական աշխատող, (պայմանագրի լուծմամբ), իսկ աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալու կապակցությամբ՝ 2-ը:

- **2019-2020 ուստարվա հերթական արձակուրդները տրամադրելու համար տրվել է տնօրենի հրաման:**
- Արձակուրդների տևողությունը հաշվարկվել է համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի և ՀՀ կառավարության 16 նոյեմբերի 2017 թվականի N1450-Ն որոշման.
  - դասախոսական կազմ՝ 35 աշխատանքային օր,
  - տնօրեն, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ և ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ 25 աշխատանքային օր,
  - կարիերայի ստորաբաժանման պատասխանատու, ուսումնաօժանդակ և հաշվապահ 20 աշխատանքային օր:
- Հաստիքացուցակը կազմվել, լսվել է տնօրինական խորհրդի 29.08.2019թ-ի նիստում (արձանագրություն № 1), իսկ հաստատվել է Ընդհանուր ժողովի 03.09.2019թ-ի նիստում (արձանագրություն № 1):
- Քոլեջում աշխատում են տարիքային 3 թոշակառուներ:

- Թոշակները ձևակերպելու և վերահաշվարկի համար աշխատանքային ստաժի մասին տրվել են համապատասխան տեղեկանքներ:
- Բաժնում աշխատանքի ընդունման, ազատման, պաշտոնի փոփոխության և բոլոր այլ հրամանները գրանցվում են հրամանագրքում:

Բոլոր աշխատողների, ներառյալ ժամավճարային աշխատողների, անձնական գործերում առկա են հրամանները և իրավական այլ փաստաթղթերի փոփոխությունները:

2019-2020 ուստարվա հրամանների թիվը կազմել է 1-ից մինչև 41 -ը:

- Կատարվել է հրամանների կրկնօրինակների կամ քաղվածքների տրամադրում հասցեատերերին, որը հաշվառվել է գրանցամատյանում:

Տարվա ընթացքում իրականացվել է մուտքի և ելքի փաստաթղթերի հաշվառում՝ համապատասխան գրանցամատյաններում:

Կատարվել է դիմումների և զեկուցագրերի հաշվառում:

- Նոր ուսումնական տարվա սկզբին, ուսումնական մասի հետ տրվել է վիճակագրական հաշվետվություն, հիմնականում պրոֆեսորադասախոսական կազմի, նրանց զբաղեցրած պաշտոնների, դրույքաչափերի մասին: Բոլոր տվյալներում առանձնացված է կանանց թիվը:
- Հաշվետու ժամանակահատվածում տրվել է 143 տեղեկանք /աշխատողներին՝ 8, ուսանողներին՝ 135/, բանկ, դեսպանատներ, դպրոցներ, սոց. ծառայությունների տարածքային բաժիններ ներկայացնելու համար:

ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ՝ Ա.Գյոզալյան